



ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ՇՄՆ «ՀԻՊՐՈՏԵՐԵԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՀ հիդրոօդերևութաբանության
և շրջակա միջավայրի
մոնիթորինգի արդյունքների մասին
2024 թ. 4-րդ եռամսյակ



ԿԼԻՄԱ
ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐ
ՍՏՈՐԵԿՐՅԱ ԶՐԵՐ
ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ
ԱՆՏԱՌՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	7
1. ԿԼԻՄԱ.....	10
Կլիմայական ինդեքսներ.....	11
Ջերմային ալիքներ.....	13
Ցուրտ ալիքներ.....	13
Երաշտ.....	14
Արեգակնային ճառագայթում.....	16
Քամու բաշխումը.....	16
Օդի հարաբերական խոնավություն.....	16
Մթնոլորտային ճնշումը.....	17
Երևան.....	17
2. ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....	20
Հոկտեմբեր.....	20
Նոյեմբեր.....	22
Դեկտեմբեր.....	24
3. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՐԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ.....	27
Երևան.....	30
Գյումրի.....	34
Վանաձոր.....	35
Ալավերդի.....	38
Հրազդան.....	41
Արարատ.....	42
Կապան.....	43
Քաջարան.....	44
Չարենցավան.....	45
Ծաղկաձոր.....	46
Եվրոպայում մեծ տարածությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման համատեղ ծրագիր.....	50
4. ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՅՐԱՀԱՄ ՋՐԵՐ.....	51
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք.....	52
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք.....	55
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք.....	60
Սևանա լիճ.....	70
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք.....	76
Հարավային ջրավազանային կառավարման տարածք.....	81
Ջրամբարներ.....	83
Արաքս գետ.....	84
5. ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ.....	85
6. ԱՆՏԱՌՆԵՐ.....	88
Հատատեղեր.....	88
Փայտանյութի մթերում.....	88
Անտառպահպանություն.....	88
Անտառվերականգնում.....	90
Առաջարկություններ.....	91
Հավելված 1. Դիտակետերի տեղադրության ցանկ.....	93
Հավելված 2. Ցուցանիշների ցանկ.....	109
Հավելված 3. Նորմերի և սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների ցանկ.....	112

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Երաշտային պայմանները աշնանը.....	15
Աղյուսակ 2. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2024թ. Հոկտեմբեր.....	22
Աղյուսակ 3. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2024թ. Նոյեմբեր.....	23
Աղյուսակ 4. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2024թ. Դեկտեմբեր.....	26
Աղյուսակ 5. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	52
Աղյուսակ 6. Ախուրյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	55
Աղյուսակ 7. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	60
Աղյուսակ 8. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	66
Աղյուսակ 9. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2024 թվականի 4-րդ եռամսյակում.....	70
Աղյուսակ 11. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	76
Աղյուսակ 12. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	81
Աղյուսակ 13. Ջրամբարների ջրալցվածությունը 2024 թվականի 4-րդ եռամսյակում.....	83

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1. Օդի ջերմաստիճանի շեղումները նորմայից աշնան սեզոնին՝ 1935-2024 թթ.	10
Գծապատկեր 2. Մթնոլորտային տեղումների շեղումները նորմայից աշնան սեզոնին՝ 1935-2024 թթ.	11
Գծապատկեր 3. SU25 ինդեքսի արժեքները 2024 թվականի աշնանը.....	11
Գծապատկեր 4. Օրական առավելագույն ջերմաստիճանի 2024 թվականի աշնանը.....	12
Գծապատկեր 5. Օրական նվազագույն ջերմաստիճանի առավելագույն արժեքները.....	12
Գծապատկեր 6. Ամենաերկար ջերմային ալիքի տևողությունը 2024 թվականի աշնանը.....	13
Գծապատկեր 7. Ջերմային ալիքով օրերի թիվը 2024 թվականի աշնանը.....	13
Գծապատկեր 8. Ամենաերկար ցուրտ ալիքի տևողությունը 2024 թվականի աշնանը.....	14
Գծապատկեր 9. Ցուրտ ալիքով օրերի թիվը 2024 թվականի աշնանը.....	14
Գծապատկեր 10. Քամու արագությունը աշնանը.....	16
Գծապատկեր 11. Օդի հարաբերական խոնավությունը ըստ բարձրությունների 2024 թվականի աշնանը.....	17
Գծապատկեր 12. Մթնոլորտային ճնշումը 2024 թվականի աշնանը.....	17
Գծապատկեր 13. Օրական առավելագույն, նվազագույն և միջին ջերմաստիճանները Երևանում 2024 թ աշնանը.....	18
Գծապատկեր 14. Ամսական տեղումների քանակը և դրանց շեղումները նորմայից (մմ) աշնան ամիսներին Երևանում 1966-2024 թթ.	19
Գծապատկեր 15. Տեղումներ, հոկտեմբեր 2024թ.	21
Գծապատկեր 16. Տեղումներ, նոյեմբեր 2024թ.	23
Գծապատկեր 17. Տեղումներ, դեկտեմբեր 2024թ.	25
Գծապատկեր 18. Մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների.....	28
Գծապատկեր 19. Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների.....	28
Գծապատկեր 20. Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների.....	29
Գծապատկեր 21. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	30
Գծապատկեր 22. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	30

Գծապատկեր 48. Ամբերդի կայանում ամռնիակի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.....	50
Գծապատկեր 49. Փամբակ գետում ամռնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները ..	53
Գծապատկեր 50. Դեբեդ գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները	53
Գծապատկեր 51. Ախթալա գետում պղնձի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	54
Գծապատկեր 52. Ախթալա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները	54
Գծապատկեր 53. Հյուսիսային ՋԿՏ-ի բնադրյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները.....	54
Գծապատկեր 54. Մեծամոր գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	55
Գծապատկեր 55. Ախուրյանի ՋԿՏ-ի բնադրյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները.....	56
Գծապատկեր 56. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները.....	57
Գծապատկեր 57. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները.....	57
Գծապատկեր 58. Ախուրյանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները.....	58
Գծապատկեր 59. Ախուրյանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները.....	58
Գծապատկեր 60. Ախուրյանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը.....	58
Գծապատկեր 61. Քասախ գետում ամռնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	61
Գծապատկեր 62. Հրազդան գետում ամռնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները ..	61
Գծապատկեր 63. Հրազդան գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	61
Գծապատկեր 64. Հրազդանի ՋԿՏ-ի բնադրյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները	62
Գծապատկեր 65. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները.....	63
Գծապատկեր 66. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները.....	63
Գծապատկեր 67. Հրազդանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները.....	64
Գծապատկեր 68. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները.....	64
Գծապատկեր 69. Հրազդանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը	64
Գծապատկեր 70. Հրազդանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում նիտրատ իոնի պարունակությունը	65
Գծապատկեր 71. Հրազդանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերում սուլֆատ իոնի պարունակությունը	65
Գծապատկեր 72. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ամռնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	67
Գծապատկեր 73. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	67
Գծապատկեր 74. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	67
Գծապատկեր 75. Սևանի ՋԿՏ-ի բնադրյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները.....	68
Գծապատկեր 76. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները.....	69
Գծապատկեր 77. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները.....	69
Գծապատկեր 78. Սևանի ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը.....	69
Գծապատկեր 79. Մեծ Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	74
Գծապատկեր 80. Փոքր Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	74
Գծապատկեր 81. Մեծ Սևանում ամռնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	75

Գծապատկեր 82. Փոքր Սևանում ամռնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	75
Գծապատկեր 83. Արփա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	77
Գծապատկեր 84. Արարարտյան ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի ծախսերի փոփոխությունները.....	78
Գծապատկեր 85. Արարարտյան ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները.....	78
Գծապատկեր 86. Արարարտյան ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները.....	78
Գծապատկեր 87. Արարարտյան ՋԿՏ-ի ջատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները.....	79
Գծապատկեր 88. Արարատյան ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը	79
Գծապատկեր 89. Արարատյան ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի նիտրատ իոնի պարունակությունը	80
Գծապատկեր 90. Արարատյան ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի սուլֆատ իոնի պարունակությունը	80
Գծապատկեր 94. Հարավային ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի ծախսերի փոփոխությունները	82
Գծապատկեր 95. Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը	82
Գծապատկեր 96. Երևանյան լճում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	83
Գծապատկեր 97. Երևանյան լճում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	84

Հապավումներ

ՍԹԿ	սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՋԿՏ	ջրավազանային կառավարման տարածք
ԸԱԱ	ընդհանուր անօրգանական ազոտ
ԸԼԱ	ընդհանուր լուծված աղեր
ԿՉՆ	կախության չոր նյութեր
ԹԿՊ ₅	թթվածնի հնգօրյա կենսաբանական պահանջարկ
ԹՔՊ	թթվածնի քիմիական պահանջարկ
մ	մետր
մմ	միլիմետր
մ/վ	մետր վայրկյանում
մկգ/մ ³	միկրոգրամ մեկ խորանարդ մետրում
մգ/լ	միլիգրամ մեկ լիտրում
մկՍմ/սմ	միկրոսիմենս մեկ սանիմետրում
հՊա	հեկտապասկալ

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («Հայհիդրոմետ» ՊՈԱԿ) 2024 թվականի 4-րդ եռամսյակի տեղեկագրում ներկայացված են սեզոնային կլիմայական նկարագրության, եղանակային երևույթների, մթնոլորտային օդի որակի, մթնոլորտային տեղումների որակի և քանակի, մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի և քանակի, հողային ծածկույթի, անտառների մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվություն:

«Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի աշխատանքային ծրագրերը կազմվում են կանոնադրության համաձայն և ղեկավարվելով հետևյալ հիմնական իրավական ակտերով.

❖ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1902-Լ որոշում:

❖ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 30-ի ««Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2024-2026 թվականների ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոոդերևութաբանական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» N826-Լ որոշում:

❖ ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2024 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» N 1656-Ն որոշում:

❖ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետերի ցանկը հաստատելու և Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի ապրիլի 21-ի N 121-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1584-Ն հրաման:

Օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 42 (այդ թվում՝ 4 դժվարամատչելի և 2 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում, 49 կայանում իրականացվում են ավտոմատ դիտարկումներ: Դիտարկումներն իրականացվում են Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան: Կատարվում են դիտարկումներ օդերևութաբանական բոլոր տարրերի նկատմամբ, ինչպիսիք են՝ օդի և հողի ջերմաստիճանը, մթնոլորտային ճնշումը, քամու ուղղությունը և արագությունը, օդի խոնավությունը, տեղումների քանակը, ամպամածության ձևը և քանակը, հորիզոնական տեսանելիությունը, մթնոլորտային երևույթները և այլ: Նորմաները հաշվարկված են բազմամյա դիտարկումների հիման վրա:

Մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանում, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետում, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: Անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ պարունակող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է

սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 91 դիտակետ (այդ թվում 80 գետային, 2 ջրանցքի, 5 ջրամբարային և 4 Սևանա լճի) Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա: 91 դիտակետում իրականացվում են ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների ամենօրյա դիտարկումներ: 80 գետային և 2 ջրանցքի դիտակետերում իրականացվում են ջրի էլքի չափումներ (տարեկան 25-35 անգամ): Հիդրոլոգիական դիտակետերից 9-ում տեղադրված են ջրի մակարդակի ավտոմատ մակարդակաչափեր (ռադարային կամ ինքնագրային):

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքի գետերի, ջրամբարների, Արփա-Սևան, Որոտան-Կեչուտ ջրատարի և Սևանա լճի 151 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական ավելի քան 45 ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքի 119 ստորերկրյա ջրաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի/ճնշման և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ կատարվում է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ 55 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր): Ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. դեկտեմբերի 25-ի N876-Ն հրամանի:

Կոմունալ աղբավայրերի հարակից տարածքներում կայուն օրգանական աղտոտիչների պարունակությունները որոշելու համար կատարվում են հողի նմուշառումներ: Յուրաքանչյուր նմուշում որոշվում են մինչև 19 քլորօրգանական պետսիցիդներ և 24 պոլիքլորացված բիֆենիլներ: Կատարված դիտարկումների արդյունքները հրապարակվում են տարեկան տեղեկագրում:

ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի «Եվրոպայում մեծ տարածությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման» (EMEP) ծրագրի շրջանակներում ՀՀ-ում գործում է մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի առաջին մակարդակի տարածաշրջանային դիտակայան (Ամբերդի դիտակայան): Դիտակայանի մթնոլորտային օդի և մթնոլորտային տեղումների որակի մոնիթորինգի արդյունքները ներկայացվում են կոնվենցիայի քիմիական կոորդինացիոն կենտրոն, որը գործում է Նորվեգիայի օդի հետազոտության ինստիտուտի ներքո: Մոնիթորինգի և արտանետումների տվյալների հիման վրա Նորվեգիայի օդերևութաբանական ինստիտուտի կողմից կատարվում է օդի անդրսահմանային աղտոտման մոդելավորում և պատրաստվում է Հայաստանի Հանրապետության համար տարեկան զեկույց:

Մակերևութային և ստորերկրյա ջրերի որակի և քանակի մոնիթորինգի դիտակետերի ցանկը հաստատվել է համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի հունիսի 15-ի N212-Լ հրամանի:



1. ԿԼԻՄԱ

2024 թվականի աշնանը դիտված կլիմայական պայմանները ընդհանուր առմամբ մոտ էին կլիմայական նորմային (1961-1990թթ): Աշնան միջին սեզոնային ջերմաստիճանը 7.5 °C՝ նորմայից բարձր էր 0.3 °C-ով, իսկ սեզոնային տեղումների քանակը կազմել է 144.3 մմ կամ նորմայի 121.2 %-ը:

Մեպտեմբեր: 2024 թվականի սեպտեմբեր ամսվա օդի միջին ամսական ջերմաստիճանը կազմել է 13.9 °C, որը մոտ էր նորմային (13.2 °C): Տեղումների ամսական քանակը դիտվել է 47.7 մմ՝ կազմելով նորմայի (28 մմ) 170.4 %-ը:


Չոկտեմբեր: 2024 թվականի հոկտեմբեր ամսվա օդի միջին ամսական ջերմաստիճանը Հայաստանում կազմել է 7.1 °C, որը մոտ էր նորմային: Տեղումների ամսական քանակը դիտվել է 66.2 մմ,՝ կազմելով նորմայի 132.3 %-ը:

Նոյեմբեր: 2024 թվականի նոյեմբեր ամսվա օդի միջին ամսական ջերմաստիճանը Հայաստանում կազմել է 1.7 °C, որը մոտ էր նորմային: Նոյեմբեր ամսվա տեղումների քանակը եղել է 30.4 մմ, ինչը ցածր էր նորմայից՝ կազմելով նորմայի 74 %-ը:




Օդի ջերմաստիճանի շեղումը նորմայից

Մթնոլորտային տեղումների շեղումը նորմայից



Գծապատկեր 1. Օդի ջերմաստիճանի շեղումները նորմայից աշնան սեզոնին՝ 1935-2024 թթ.




Պատկեր 2. Մթնոլորտային տեղումների շեղումները նորայից աշնան սեզոնին՝ 1935-2024 թթ.

Աշնան միջին ջերմաստիճանի աճը 1935-2024 թթ. կազմել է 1.1 °C, իսկ տեղումները նվազել են 29 %-ով:


Կլիմայական ինդեքսներ

Գնահատվել է ամառային օրերի թիվը (SU25 ինդեքս), երբ առավելագույն ջերմաստիճանը 25 °C-ից բարձր է: 2024թ. աշնան սեզոնին SU25 ինդեքսը մոտ է եղել նորային: Առավելագույն դրական շեղումները դիտվել են Ապարանում, Գորիսում և Արմավիրում՝ 4 օր: Բացասական շեղումները մեծ են եղել Եղվարդում և Բագրատաշենում՝ -7 օր:




Պատկեր 3. SU25 ինդեքսի արժեքները 2024 թվականի աշնանը (կարմիր) և նորման (կապույտ)

Օդի առավելագույն ջերմաստիճանները (TXx) 2024թ աշնան սեզոնին մոտ են եղել նորմային: Առավելագույն դրական շեղումներ դիտվել են Ջերմուկում՝ 2.4 °C, Մասրիկում՝ 2.1°C, Շորժայում և Օձունում՝ 1.9 °C: Առավելագույն բացասական շեղումը գրանցվել է Աշոցքում՝ -1.5 °C:



Գծապատկեր 4. Օրական առավելագույն ջերմաստիճանի (°C) (TXx) արժեքները 2024 թվականի աշնանը (կարմիր) և նորման (կապույտ)


Օդի նվազագույն ջերմաստիճանների առավելագույն արժեքները (TNx) 2024թ. աշնան սեզոնին եղել են նորմային մոտ՝ որոշակի դրական և բացասական շեղումներով: Առավելագույն դրական շեղումները դիտվել են Ուրցածորում՝ 1.9 °C և Թալինում՝ 1.8°C: Առավելագույն բացասական շեղումները դիտվել են Ամասիայում՝ -2.9°C, և Դիլիջանում՝ -1.9 °C:




Գծապատկեր 5. Օրական նվազագույն ջերմաստիճանի առավելագույն արժեքները (TNx) 2024 թվականի աշնանը (կարմիր) և նորման (կապույտ)

Ջերմային ալիքներ

Ըստ օրական առավելագույն ջերմաստիճանի դիտարկումների տվյալների՝ 2024 թվականի աշնանը ջերմային ալիք դիտվել է հոկտեմբերի 8-12-ը և նոյեմբերի 23-26-ը: Հոկտեմբերի առաջին տասնօրյակում օրական առավելագույն ջերմաստիճանները Կապանում և Մեղրիում հասել են մինչև 33 °C, իսկ Արարատյան դաշտում՝ 28-29 °C: 2024 թվականի աշնանը դիտված ջերմային ալիքները իրենց տևողությամբ և գումարային օրերի քանակով կայանների մեծ մասում ցածր էին նորմայից: Ամենաերկար ջերմային ալիքի տևողությունը կազմել է 5 օր՝ Շորժայում և Արարատում:



Գծապատկեր 6. Ամենաերկար ջերմային ալիքի տևողությունը 2024 թվականի աշնանը (կարմիր) և 1991-2020 թթ. ժամանակահատվածում (կապույտ)




Գծապատկեր 7. Ջերմային ալիքով օրերի թիվը 2024 թվականի աշնանը (կարմիր) և 1991-2020 թթ. նորման (կապույտ)


Ցուրտ ալիքներ

Ըստ օրական նվազագույն ջերմաստիճանի դիտարկումների տվյալների՝ 2024 թվականի աշնանը ցուրտ ալիք դիտվել է հոկտեմբերի 21-ից 25-ը, հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 2-ը և նոյեմբերի 7-11-ը: Այս ժամանակահատվածում Արարատյան դաշտում

գրանցվեցին $-2\text{ }^{\circ}\text{C}$ -ից մինչև $-5\text{ }^{\circ}\text{C}$ նվազագույն ջերմաստիճաններ, իսկ Շիրակում և Լոռիում՝ $-9\text{ }^{\circ}\text{C}$ -ից մինչև $-12\text{ }^{\circ}\text{C}$: Ցուրտ ալիքով օրերի թիվը որոշ կայաններում գերազանցել է նորման (Արմավիր, Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր), իսկ ամենաերկարատև ցուրտ ալիքի դեպքը դիտվել է Արմավիրում՝ 6 օր:



Գծապատկեր 8. Ամենաերկար ցուրտ ալիքի տևողությունը 2024 թվականի աշնանը (կարմիր) և 1991-2020 թթ. ժամանակահատվածում (կապույտ)



Գծապատկեր 9. Ցուրտ ալիքով օրերի թիվը 2024 թվականի աշնանը (կարմիր) և 1991-2020 թթ. նորման (կապույտ)

Երաշտ

2024 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին օդերևութաբանական երաշտի ինտենսիվության մոնիթորինգ իրականացվել է 38 կայանների տվյալների հիման վրա, որոնք բնութագրական են ամբողջ տարածքի համար: Երաշտային պայմանների գնահատումը իրականացվել է 5 կարգերով՝ 1-շատ ուժեղ, 2-ուժեղ, 3-միջին, 4-թույլ և 5-երաշտի բացակայություն, համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի 925-Ն որոշման մեթոդաբանության:


Ինչպես երևում է Աղյուսակ 1-ից, երաշտային պայմաններ դիտվել են սեպտեմբեր ամսին: Օդերևութաբանական երաշտ հիմնականում դիտվել է Արարատյան դաշտում, Սյունիքի և Վայոց Ձորի հովտային շրջաններում, ինչը պայմանավորված է այս շրջանների չոր և տաք կլիմայական պայմաններով:

Աղյուսակ 1. Երաշտային պայմանները աշնանը

N	Մարզ	Կայան	01.09-10.09	11.09-20.09	21.09-30.09	01.10-10.10	11.10-20.10	21.10-31.10
1	Շիրակ	Գյումրի	2	5	5	5	5	5
		Անասիա	3	4	5	5	5	5
		Արթիկ	2	3	5	5	5	5
		Աշոցք	5	5	5	5	5	5
2	Լոռի	Օձուն	2	4	3	5	5	5
		Տաշիր	4	5	5	5	5	5
		Վանաձոր	3	4	5	5	5	5
		Ստեփանավան	5	5	5	5	5	5
3	Տավուշ	Բագրատաշեն	2	3	2	4	5	5
		Իջևան	3	3	3	5	5	5
		Դիլիջան	3	5	5	5	5	5
4	Գեղարքունիք	Սևան	3	5	5	5	5	5
		Սեմյոնովկա	3	5	5	5	5	5
		Գավառ	3	5	5	5	5	5
		Շորժա	3	5	5	5	5	5
		Մարտունի	3	5	5	5	5	5
		Ճամբարակ	4	5	5	5	5	5
		Մասրիկ	1	5	5	5	5	5
5	Կոտայք	Հրազդան	3	5	5	5	5	5
		Եղվարդ	1	3	4	4	5	5
		Ֆանտան	3	5	5	5	5	5
6	Արագածոտն	Թալին	1	2	3	3	5	5
		Ապարան	5	5	5	5	5	5
		Աշտարակ	1	1	2	2	5	5
		Ամբերդ	2	5	5	5	5	5
		Ծաղկահովիտ	5	5	5	5	5	5
7	Վայոց Ձոր	Արենի	1	2	2	3	5	5
		Ջերմուկ	2	5	5	5	5	5
8	Սյունիք	Սիսիան	2	3	3	4	5	5
		Գորիս	4	2	5	5	5	5
		Կապան	1	1	3	3	4	5
		Մեղրի	1	1	2	2	2	1
9	Արարատ	Արարատ	1	2	2	2	3	5
		Ուրցաձոր	1	2	2	2	5	5
		Անանուն լ/ցք	2	3	2	3	5	5
		Արտաշատ	1	1	1	1	4	5
10	Արմավիր	Արմավիր	1	2	2	2	5	5
		Մերձավան	2	2	2	2	5	5

Արեգակնային ճառագայթում


2024 թվականի աշնան ամիսների արեգակնային ուղիղ ճառագայթման բաշխման քարտեզներից երևում է, որ սեպտեմբերին գրանցված արժեքներն ամենաբարձրն են աշնան սեզոնի ընթացքում (մինչև 170Վտ/մ²): Աշնան երեք ամիսներին էլ առավելագույն արժեքներով աչքի է ընկել Արարատյան դաշտը, իսկ դեպի հյուսիս-արևելք արեգակնային ճառագայթման արժեքները աստիճանաբար նվազում են :



Գարձալիք ճառագայթման արժեքները (Վտ/մ²) ըստ արբանյակային դիտարկումների սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին (ձախից աջ հերթականությամբ)

Քամու բաշխումը


Աշնան սեզոնին քամու միջին արագությունը հովտային շրջաններում՝ 500-800 մ բարձրություններում գրանցվել է 1.3 մ/վ, 800-1000 մ բարձրություններում՝ 0.9 մ/վ: Ամենամեծ արագությամբ քամի արձանագրվել է 2500 մ և ավել բարձրություններում՝ 3.2 մ/վ, որը սակայն ցածր էր նորմայից 1.1 մ/վ-ով:



Գծայատկեր 10. Քամու արագությունը (մ/վ) 2024 թվականի աշնանը (կապույտ) և 1991-2020 թթ. նորման (նարնջագույն)

Օդի հարաբերական խոնավություն


2024 թվականի աշնան սեզոնի հարաբերական խոնավությունը բոլոր բարձրություններում դիտվել է նորմայից բարձր, բացառությամբ ցածրադիր գոտու, որտեղ հարաբերական խոնավությունը եղել է նորմայից ցածր:



Գծապատկեր 11. Օդի հարաբերական խոնավությունը (%) ըստ բարձրությունների 2024 թվականի աշնանը (կապույտ) և 1991-2020 թթ. նորման (մոխրագույն)

Մթնոլորտային ճնշումը

2024 թվականի աշնան սեզոնի մթնոլորտային ճնշումը բոլոր բարձրություններում դիտվել է նորմայից ցածր կամ նորմային մոտ:




Գծապատկեր 12. Մթնոլորտային ճնշումն (հՊա) ըստ բարձրությունների 2024 թվականի աշնանը (կապույտ) և 1991-2020 թթ. նորման (մոխրագույն)

Երևան


Սեպտեմբեր ամսվա միջին ջերմաստիճանը կազմել է 22.1 °C, որը նորմայից բարձր է 0.5 °C-ով: Տեղումների քանակը եղել է 23.8 մմ, որը կազմում է սեպտեմբեր ամսվա նորմայի 170 %-ը:

Հոկտեմբեր ամսվա միջին ջերմաստիճանը կազմել է 13.6 °C, որը նորմայից բարձր է 0.5 °C-ով: Տեղումների քանակը եղել է 49.7 մմ, որը կազմում է հոկտեմբեր ամսվա նորմայի 189 %-ը:

Նոյեմբեր ամսվա միջին ջերմաստիճանը կազմել է 6.6 °C, որը նորմայից բարձր է 0.9°C-ով: Տեղումների քանակը եղել է 29 մմ, որը կազմում է նոյեմբեր ամսվա նորմայի 106%-ը:




Գծապատկեր 13. Օրական առավելագույն (կարմիր), նվազագույն (կապույտ) և միջին (կանաչ) ջերմաստիճանները Երևանում 2024 թ աշնանը ըստ ամիսների: Կետերով նշված են երբևիցե դիտված առավելագույն (նարնջագույն) և նվազագույն (կապույտ) օրական ջերմաստիճանները



Գծապատկեր 14. Ամսական տեղումների քանակը և դրանց շեղումները նորմայից (մմ) աշնան ամիսներին Երևանում 1966-2024 թթ. ժամանակահատվածում

2. ՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ Հոկտեմբեր


2024թ. հոկտեմբերին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է նորմայից ցածր մինչև 1 աստիճանով:



Նկար 1. Միջին ամսական ջերմաստիճանները և դրանց շեղումները նորմայից (նորմա՝ 1991-2020թթ.) հոկտեմբերին

Հոկտեմբեր ամսվա միջին տասնօրյակային ջերմաստիճանը առաջին տասնօրյակում եղել է նորմայից բարձր մինչև 1 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ նորմայից ցածր մինչև 1 աստիճանով, երրորդ տասնօրյակում՝ նորմայից ցածր՝ 2-4 աստիճանով:


Ամսական տեղումների քանակը հոկտեմբերին Տավուշում կազմել է նորմայի 143-166%-ը, Լոռիում՝ 132-169%-ը, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 86-123%-ը, հովտային շրջաններում՝ 29-77%, Գեղարքունիքում՝ 107-239%, Շիրակում՝ 139-201%, Վայոց ձորում՝ 75-111%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 113-134%, նախալեռնային շրջաններում՝ 131-132%, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 137-253%, նախալեռնային շրջաններում՝ 142-174%, Արմավիրում՝ 248-249%, Արարատում՝ 162-171%, Երևան քաղաքում՝ 187-189%:



Նկար 2. Տեղումների քանակն և շեղումը բազմամյա միջինից (նորմա՝ 1991-2020թթ.) հոկտեմբերին

Հոկտեմբերին 1-ին, 3-ին, 8-9-ին, 11-13-ին, 15-ին, 19-23-ին, 26-ին առանձին շրջաններում, 2-ին, 14-ին, 16-18-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:

Հոկտեմբերին 4-7-ին, 10-ին, 24-25-ին, 27-31-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:




Գծապատկեր 15. Տեղումներ, հոկտեմբեր 2024թ. (նորմա՝ 1991-2020թթ.)

Աղյուսակ 2. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2024թ. հոկտեմբեր

Մարզ / օդերևութաբանական կայան	Դիտման օրը(երը)	Երևույթի անվանումը	Բնութագիրը	Չափանիշը/ Չափորոշիչը	Փաստացի
Սյունիք/Գորիս	15	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Արագածոտն/Ամբերդ	17	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
		Ուժեղ անձրև	Բնտեսիվություն	≥30մմ/12ժամ	68.0մմ
Լոռի/Ստեփանավան	20	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ

Նոյեմբեր


2024թ. նոյեմբերին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է նորմայի սահմաններում մի փոքր դրական և բացասական շեղումներով:



Նկար 3. Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից (նորմա՝ 1991-2020թթ.) նոյեմբերին

Նոյեմբեր ամսվա միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից ցածր 1-2 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ նորմայի սահմաններում մի փոքր դրական և բացասական շեղումներով, երրորդ տասնօրյակում՝ նորմայից բարձր 1-3 աստիճանով:


Ամսական տեղումների քանակը նոյեմբերին Տավուշում կազմել է նորմայի 65-77%, Լոռիում՝ 90-112%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 109-160%, հովտային շրջաններում՝ 77-100%, Գեղարքունիքում՝ 53-130%, Շիրակում՝ 80-149%, Վայոց ձորում՝ 75-98%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 51-69%, նախալեռնային շրջաններում՝ 113-114%, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 68-190%, նախալեռնային շրջաններում՝ 60-85%, Արմավիրում՝ 60-61%, Արարատում՝ 68-119%, Երևան քաղաքում՝ 107-110%:



Նկար 4. Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից (նորմա՝ 1991-2020թթ.) նոյեմբերին

Նոյեմբերի 1-3-ին, 6-10-ին, 13-15-ին, 22-24-ին, 29-30-ին դիտվել է առավելապես առանց տեղումների եղանակ:

Նոյեմբերի 4-5-ին, 11-12-ին, 16-ին, 18-21-ին, 25-ին, 28-ին առանձին շրջաններում, 17-ին, 26-27-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ, 26-27-ին լեռնային շրջաններում՝ ձյան տեսքով, 27-ի գիշերը նաև հովտային շրջաններում և Երևանում՝ ձյան տեսքով:




Գծապատկեր 16. Տեղումներ, նոյեմբեր 2024թ. (նորմա՝ 1991-2020թթ.)

Աղյուսակ 3. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2024թ. նոյեմբեր

Մարզ / օդերևութաբանական կայան	Դիտման օրը(երը)	Երևույթի անվանումը	Բնութագիրը	Չափանիշը/ Չափորոշիչը	Փաստացի
Արագածոտն/Ամբերդ	16	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Արագածոտն/Ամբերդ	21	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Արագածոտն/Ամբերդ	26	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Արագածոտն/Ամբերդ	27	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Կոտայք/Եղվարդ		Ուժեղ ձյուն	Ինտենսիվություն	≥20մմ/12ժամ	22.1մմ
Շիրակ/Աշոցք		Ուժեղ բուք	Արագություն	≤500մ/≥10մ/վ	500մ /16մ/վ
Արագածոտն/Ամբերդ	28	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ

Ղեկտեմբեր


2024թ. ղեկտեմբերին օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է նորմայից բարձր մինչև 1 աստիճանով:



Նկար 5. Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից (նորմա՝ 1991-2020թթ.) ղեկտեմբերին

Ղեկտեմբեր ամսվա միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին և երկրորդ տասնօրյակներում եղել է նորմայի սահմաններում մի փոքր դրական և բացասական շեղումներով, երրորդ տասնօրյակում՝ նորմայից բարձր 2-4 աստիճանով:


Ամսական տեղումների քանակը ղեկտեմբերին Տավուշում կազմել է նորմայի 31-44%, Լոռիում՝ 24-57%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 35-44%, հովտային շրջաններում՝ 50-66%, Գեղարքունիքում՝ 36-85%, Շիրակում՝ 26-48%, Վայոց ձորում՝ 32-53%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 54-60%, նախալեռնային շրջաններում՝ 46-47%, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 70-94%, նախալեռնային շրջաններում՝ 39-102%, Արմավիրում՝ 46-47%, Արարատում՝ 43-79%, Երևան քաղաքում՝ 58-62%:



Նկար 6. Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից (նորմա՝ 1991-2020թթ.) դեկտեմբերին

Դեկտեմբերի 1-ին, 4-8-ին, 9-11-ին, 15-16-ին, 18-22-ին, 24-26-ին, 30-31-ին դիտվել է առավելապես առանց տեղումների եղանակ:

Դեկտեմբերի 2-3-ին, 17-ին, 23-ին առանձին շրջաններում, 12-14-ին, 27-29-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ, լեռնային շրջաններում՝ ձյան տեսքով:



Գծապատկեր 17. Տեղումներ, դեկտեմբեր 2024թ.

Աղյուսակ 4. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2024թ. դեկտեմբեր

Մարզ / օդերևութաբանական կայան	Դիտման օրը(երբ)	Երևույթի անվանումը	Բնութագիրը	Չափանիշը/ Չափորոշիչը	Փաստացի
Արարատ/Արարատ	8	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	40մ
Արարատ/Արարատ	10	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	40մ
Արարատ/Արարատ	11	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	40մ
Արարատ/Արարատ	12	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	40մ
Երևան/Ալեքոյրգիական		Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Արագածոտն/Ամբերդ		Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Արարատ/Ուրցաձոր		Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Արարատ/Արարատ	13	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	40մ
Երևան/Ալեքոյրգիական		Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Երևան/Մերձավան		Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	0մ
Արարատ/Արտաշատ		Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Արարատ/Ուրցաձոր		Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Արագածոտն/Ապարան	14	Ուժեղ բուք	Տեսանելիություն Արագություն	≤500մ ≥10մ/վ	300մ 18մ/վ
Գեղարքունիք/Գավառ		Ուժեղ բուք	Տեսանելիություն Արագություն	≤500մ ≥10մ/վ	500մ 18մ/վ
Գեղարքունիք/Մասրիկ		Ուժեղ բուք	Տեսանելիություն Արագություն	≤500մ ≥10մ/վ	500մ 19մ/վ
Վոտայք/Ճանտան		Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	28մ/վ
Արագածոտն/Ամբերդ		Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	26մ/վ
Շիրակ/Աշոցք		Ուժեղ բուք	Տեսանելիություն Արագություն	≤500մ ≥10մ/վ	500մ 20մ/վ
Արագածոտն/Ամբերդ	17	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Գեղարքունիք/Ճամբարակ	18	Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	28մ/վ
Գեղարքունիք/Մարտունի		Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	32մ/վ
Լոռի/Տաշիր		Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	26մ/վ
Լոռի/Տաշիր	19	Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	26մ/վ
Արագածոտն/Աշտարակ		Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	25մ/վ
Շիրակ/Արթիկ	23	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Արարատ/Արարատ	26	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	40մ
Արագածոտն/Ամբերդ	27	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Երևան/Ալեքոյրգիական	28	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Երևան/Մերձավան		Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Արագածոտն/Ամբերդ		Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Արարատ/Արարատ		Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	40մ
Շիրակ/Գյումրի		Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Արարատ/Արտաշատ	29	Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ
Արարատ/Արարատ		Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	40մ
Երևան/Մերձավան		Ուժեղ մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ

3. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել բնական և մարդածին: Աղտոտման պատճառներ կարող են հանդիսանալ՝

- վառելիքի այրումը (էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտ, արդյունաբերություն և տնային տնտեսություններ),

- արդյունաբերական արտանետումները, լուծիչների օգտագործումը, օրինակ՝ քիմիական և հանքարդյունաբերության ոլորտում,

- գյուղատնտեսությունը,

- թափոնների բաց այրումը,

- բնական աղբյուրների, ներառյալ հրաբխային ժայթքումների, լեռնային փոշու տարածումը, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետումները և այլն:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ, որոնք իրենց մեջ պարունակում են ծանր մետաղներ:


Փոշով աղտոտվածությունը կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, շինարարության և այլ ոլորտների գործունեության հետևանքով:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:

Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական գործընթացների ժամանակ:


Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար 2024 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.meteomonitoring.am ինտերնետային կայքում:

2024 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդում ըստ բաղադրության չտարբերակված փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՄԹԿ-ն. Հրազդանում՝ նոյեմբեր ամսին, Երևանում, Գյումրիում, Հրազդանում և Արարատում՝ դեկտեմբեր ամսին:



Գծապատկեր 18. Մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների


2024 թվականի 4-րդ եռամսյակում քաղաքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ն:



Գծապատկեր 19. Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների

2024 թվականի 4-րդ եռամսյակում քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ն:

Ծծմբի երկօքսիդ (SO_2)
 Կոնց. (մկգ/մ³)





Գծապատկեր 20. Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների

Երևան


Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան:

2024 թվականի 4-րդ եռամսյակում Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան դեկտեմբեր ամսին աննշան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն:


Ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



*կախված մասնիկներ
**անհիդրիդ ծծմբային






Գծապատկեր 15. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները









Գծապատկեր 23. Երևան քաղաքի մթնոլորտային օդում չեղման օդում օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


**Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի SO₂ միջին
ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**






Պարնառական նշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Երկաթգծեր
-  Երևանի վարչական շրջաններ

Մծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO₂) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



- Պարունակական նշաններ**
- Պասիվ նմուշառման դիտակետեր
 - Ակտիվ նմուշառման դիտակայաններ
 - Գետային ցանց
 - Ճանապարհներ և փողոցներ
 - Երկաթգծեր
 - Երևանի վարչական շրջաններ


Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Գյումրի

Գյումրիի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շաբժական դիտակետ:


Գյումրիի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան դեկտեմբեր ամսին գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.2 անգամ: Ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 24. Գյումրիի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 25. Գյումրիի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 26. Գյումրիի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխություն


Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:


2024 թվականի 4-րդ եռամսյակում Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 27. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները






Գծապատկեր 28. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները










Գծապատկեր 29. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


**Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**






Պայմանական նշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Միջպետական ճանապարհ
-  Երկաթգծեր
-  Բնակավայրեր








Օծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Պայմանական նշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Միջպետական ճանապարհ
-  Երկաթգծեր
-  Բնակավայրեր


Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Ալավերդի

Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Գործում են երեք անշարժ դիտակայան և 42 շարժական դիտակետ:


2024 թվականի 4-րդ եռամսյակում Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 30. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոխադրումները






Գծապատկեր 31. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոխադրումները




Գծապատկեր 32. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոխադրումները

Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը






- Պարհատական նշաններ**
- Պասիվ նմուշառման դիտակ կետեր
 - Ակտիվ նմուշառման դիտակայաններ
 - Գետային ցանց
 - Ճանապարհներ և փողոցներ
 - Միջպետական ճանապարհ
 - Երկաթգծեր
 - Բնակավայրեր








Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($\mu g/m^3$)




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Պարմառական նշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Միջպետական ճանապարհ
-  Երկաթգծեր
-  Բնակավայրեր


Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)




Հրազդան

Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետ:


2024 թվականի 4-րդ եռամսյակում Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան նոյեմբեր ամսին գերազանցել է համապատասխան ՍԹ-Կ-ն՝ 1.7 անգամ, դեկտեմբերին՝ 1.1 անգամ: Ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹ-Կ-ները:



Գծապատկեր 33. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 34. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 35. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտ երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Արարատ

Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական դիտակետ:


2024 թվականի 4-րդ եռամսյակում Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան դեկտեմբեր ամսին գերազանցել է համապատասխան ՄԹԿ-ն՝ 1.1 անգամ: Ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 36. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 37. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 38. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Կապան

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 11 շարժական պասսիվ նմուշառման դիտակետ:

Կապան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 39. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 40. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Քաջարան

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 15 շարժական պասսիվ նմուշառման դիտակետ:

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 41. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 42. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Չարենցավան

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 10 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 43. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 44. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Օաղկածոր

Օաղկածոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասսիվ նմուշառման դիտակետ:


Օաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 45. Օաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները





Գծապատկեր 46. Օաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները









Գծապատկեր 47. Օաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Օսղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO₂) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պարմաուկան նշաններ



-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Բնակավայրեր








Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Օստիկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO₂)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Քետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Բնակավայրեր



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)



Մթնոլորտային տեղումների քաղաքրությունը

2024 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում վերցվել է տեղումների՝ անձրևի և ձյան 6 նմուշ: Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների որակը բնութագրող 32-ական ֆիզիկաքիմիական ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 4-ում, մնացած ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան տեղեկագրում:

Աղյուսակ 4. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում որոշ ֆիզիկաքիմիական ցուցանիշների կոնցենտրացիաները.


Ամսաթիվ	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն, մկՍմ/սմ	Սուլֆատ իոն, մգ/լ	Քլորիդ իոն, մգ/լ	Նիտրատ իոն, մգ/լ	Ամոնիում իոն, մգ/լ
15.10.2024	6.5	34.8	3.4	0.8	3.7	0.3
17.10.2024	6.5	16.5	1.6	0.3	1.4	0.2
18.10.2024	6.4	18.5	2.0	0.2	1.0	0.2
27.11.2024	6.0	36.6	1.5	2.4	1.2	1.2
12.12.2024	5.7	9.6	1.1	0.3	0.6	0.2
28.12.2024	5.9	29.0	2.9	1.2	2.0	1.9

Եվրոպայում մեծ տարածությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման համատեղ ծրագիր

Մթնոլորտային օդ

Ամբերդի տարածաշրջանային կայանում 2024 թվականի 4-րդ եռամսյակում կատարվել են մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, փոշու և փոշու մեջ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 մետաղների պարունակությունները: Կատարված դիտարկումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրում:

Ամոնիակի ($ՍԹԿ_{միջ.}=40մկգ/մ^3$) միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:



Չճապատկեր 48. Ամբերդի կայանում ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Մթնոլորտային տեղումների բաղադրությունը

2024 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում Ամբերդի կայանում վերցվել է տեղումների՝ անձրևի և ձյան 9 նմուշ: Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների բաղադրությունը բնութագրող 32 ֆիզիկաքիմիականցուցանիշ: Որոշված ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 5-ում: 4-րդ եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում:

Աղյուսակ 5. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.

Ամսաթիվ	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն, մկՍմ/սմ	Սուլֆատ իոն, մգ/լ	Քլորիդ իոն, մգ/լ	Նիտրատ իոն, մգ/լ	Ամոնիում իոն, մգ/լ
13-14.10.2024	6.6	84.3	7.1	1.5	8.3	2.6
16-17.10.2024	6.3	22.4	7.1	1.5	8.6	1.8
17-18.10.2024	6.2	9.8	0.9	0.2	0.6	0.3
19.11.2024	5.9	46.6	2.8	2.6	0.2	2.9
27.11.2024	6.0	19.8	1.3	2.2	0.8	0.1
